ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/154

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.10.2018թ. թիվ 01.1/26-3/19627-18 գրությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 19.10.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/16056-18 գրության հիման վրա, 30.10.2018թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով

նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 19.10.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/16056-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/50 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ է ներկայացրել նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը:

Գնման ընթացակարգի հրավերով որպես պարտադիր պահանջ սահմանված էր ՀՀ ԿԳ նախարարի կողմից երաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագրի՝ ըստ հրավերում ներառված մասնագիտությունների և ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանի առկայությունը, սակայն ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից վերոնշյալ պարտադիր պահանջը չի կատարվել: Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և մասնակցին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության լիազորված ներկայացուցիչ Լիլիթ Գասպարյանը:

3. <u>ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը 06.11.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/50 ծածկագրով գնման ընթացակարգի 33-րդ չափաբաժնով պահանջվող կնքված և հաստատված մոդուլային ծրագրի և այն հաստատող ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանի փոխարեն ներկայացրել է ՀՀ ԿԳ նախարարության միջին մասնագիտական կրթական ծրագրի իրականացման լիցենզիան և նրա N001 ներդիրը, և իր կողմից հաստատված «Մենեջեր» մասնագիտության ուսուցման մոդուլային ծրագիրը: Տեղի է ունեցել շփոթմունք, քանի որ ՀՀ ԿԳ նախարարության N0116 լիցենզիայի N001 ներդիրի համաձայն, ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը իրավունք ունի կրթական գործունեություն իրականացանել «Սպասարկման կազմակերպում» որակավորումը «Մենեջեր» մասնագիտությամբ:

ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը 06.11.2018թ. դիմել ՀՀ ԿԳ նախարարին «Մենեջեր» մասնագիտությունը որպես լրացուցիչ կրթություն երաշխավորելու համար:»

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից լիազորված ներկայացուցիչներ Նելլի Ավետիսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/154 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 30.10.2018թ. թիվ 01.1/26-3/19627-18 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական

հարցերի նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 19.10.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/16056-18 գրությունը և կից փաստաթղթերը, ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/50 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/50 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 10.10.2018թ. կայացած նիստի թիվ 2 և 18.10.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից 06.11.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած գրավոր դիրքորոշումը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար՝ գործազուրկների մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/50 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը:

Հանձնաժողովը 10.10.2018թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի.

- «ա» ենթակետով արձանագրել է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից կցված չէ՝ կնքված և հաստատված մոդուլային ծրագիրը և մոդուլային ծրագիրը հավաստող ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանը, ուստի մեկ աշխատանքային օրով նիստը կասեցվել է և մասնակցին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

- «բ» ենթակետով արձանագրել է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկված փաստաթուղթը չի ներկայացվել:

- 6-րդ կետի «բ» ենթակետով որոշել է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտը մերժել և 33-րդ չափաբաժնի մասով Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը ընդունեց այն փաստը, որ իրենց կողմից սահմանված կարգով և ժամկետում արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ համապատասխան շտկում չի իրականացվել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը.
- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան.
- 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը.
- 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար՝ գործազուրկների մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/50 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 1-ին մասի՝

• 1.1 կետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված ծառայության մատուցման համար պահանջվում է հետևյալ լիցենզիան՝ «ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր՝ ըստ հրավերում ներառված մասնագիտությունների».

• 7.9 կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում՝ եթե արձանագրվում են անհամապատասխանություններ նույն հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե նույն ենթակետով սահմանված ժամկետում մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո

գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/50 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով պահանջվել է հետևյալ լիցենզիան՝ «ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր՝ ըստ հրավերում ներառված մսնագիտությունների.

- ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից Հրավերով պահանջվող լիցենզիան չի ներկայացվել:

- ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/50 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և մասնակցին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունը, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում և կարգով արձանագրված անհամապատասխանության շտկում չի կատարվել:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը՝ Հրավերով պահանջվող լիցենզիան չներկայացնելով՝ խախտել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությամբ և Հրավերի 7.9 կետով սահմանված պահանջները, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտը մերժելով, գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.10.2018թ. թիվ 01.1/26-3/19627-18 գրությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ